

Վրաստանի նախագահ Մ. Սաակաշվիլին Ֆրանսիա կատարած իր այցի շրջանակներում հունիսի 8-ին զեկույցով հանդես եկավ Փարիզի քաղաքական գիտությունների ինստիտուտում, որից հետո տեղի ունեցած հարցուպատասխանի ընթացքում ջավախքահայության վիճակի մասին նրան հարց ուղղեց ֆրանսահայ «Նոր սերունդ» կազմակերպության (<http://www.norseround.fr>) ներկայացուցիչը: Ստորև ներկայացնում ենք պրն Սաակաշվիլու պատասխանի կապակցությամբ «Նոր սերունդ» կազմակերպության տարածած մամլո-հաղորդագրության հայերեն թարգմանությունը՝ կատարված «Երկիր» ՀԿ միության կողմից (որոշ կրճատումներով):



FRA NOR SEROUND **Nouvelle Génération Arménienne**

Փարիզ, 2010թ. հունիսի 10

**ՖՐԱՆՍԱՀԱՅ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՅ Է ՈՒՂՂՈՒՄ
ՍԱԱԿԱՇՎԻԼԻՆ ԶԱՎԱԽՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Վրաստանի նախագահ Մ. Սաակաշվիլին Ֆրանսիա կատարած պաշտոնական այցի շրջանակներում 2010թ. հունիսի 8-ին հանդես եկավ Փարիզի քաղաքական գիտությունների ինստիտուտում «Վրաստանը ժողովրդավարական բարեփոխումների աշխատանոց հետխորհրդային տարածքում» թեմայով զեկույցով: Միջոցառմանը ներկա էր «Նոր Սերունդ» կազմակերպության ներկայացուցիչը, որը ելույթին հաջորդած հարցուպատասխանի ընթացքում Վրաստանի նախագահին ուղղեց հետևյալ հարցը. «ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի, Եվրախորհրդի, ֆրանսիական և եվրոպական դատարանների, մի շարք ոչ-կառավարական կազմակերպությունների վերջին զեկույցներում նշվում է, որ Վրաստանի հարավում բնակվող ազգային փոքրամասնությունների և մասնավորապես Սամցխե-Ջավախք նահանգում բնակվող հայերի նկատմամբ խտրական քաղաքականություն է իրականացվում: Ի՞նչ կոնկրետ քայլեր են ձեռնարկելու վրացական իշխանությունները կյանքի կոչելու համար ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի հանձնարարականները, որոնք պահանջում են ապահովել ազգային փոքրամասնությունների առավել լիարժեք ներկայացվածությունը Վրաստանի քաղաքական և մշակութային կյանքում»:

Ի պատասխան Վրաստանի նախագահը հայտարարեց հետևյալը. «Ես չգիտեմ, թե ի՞նչ զեկույցների մասին եք դուք խոսում, ձեր ասածը ճիշտ չէ, երբեք չեմ տեսել լուրջ կազմակերպություն, որը մեզ նման բաներ ասի»: Սաակաշվիլին այնուհետև հայտարարեց, որ «հայերը Սամցխե-Ջավախքում շատ երջանիկ են իրենց վիճակով, նրանց 88%-ը նույնիսկ քվեարկել է իմ օգտին վերջին նախագահական ընտրությունների ընթացքում եւ 87%-ը՝ իմ կուսակցության օգտին անցած ՏԻՄ ընտրությունների ընթացքում»: Սաակաշվիլին ավարտեց իր պատասխանը խորհուրդ տալով «Նոր Սերունդի» ներկայացուցչին իր հիշատակած զեկույցները «նետել աղբարկղ»:

«Նոր Մերունդ» կազմակերպությունը վրդովված է Վրաստանի գորադիր իշխանության ղեկավարի վերաբերմունքով, որը բացահայտորեն մերժում է ջավախքահայության վիճակի վերաբերյալ իրական փաստերը: Բավականին յուրահատուկ է Վրաստանի նախագահի այն արտահայտությունը, որ ՄԱԿ-ի և Եվրախորհրդի հանձնարարականները, այսինքն այն կազմակերպությունների, որոնց Վրաստանն անդամակցում է, պետք է «դեն նետել»:

«Նոր Մերունդ»-ն իր հատուկ մտահոգությունն է արտահայտում ջավախքահայության նկատմամբ իրականացվող խտրական քաղաքականության, հայ քաղաքական ակտիվիստների և քաղաքական կազմակերպությունների դեմ իրականացվող հալածանքների, Վրաստանում մարդու իրավունքների ոտնահարումների և ժողովրդավարության առկա վիճակի կապակցությամբ: